ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 1 հոկտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի դատական կազմը

Նախագահությամբ՝ Վ. Պողոսյան
Անդամներ՝ Կ. Բալայան
Վ. Հովհաննիսյան

Քննության առնելով ՀՀ քաղաքացի Արմեն Խաչատրյանի՝ 2009 թ. սեպտեմբերի 15-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը քննության ընդունելու հարցը

Պ Ա Ր Զ Ե Տ

- Քաղաքացի Ա. Խաչատրյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը: Դիմողը նշում է, որ մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանության հարցում անչափ կարեւորվում է սահմանադրական արդարադատության մատչելիությունը, ինչը նաեւ ենթադրում է սահմանադրական դատարանի որոշումների կենսագործման իրական հնարավորությունների ապահովումը: Նշվածը, ի թիվս, այլոց, ենթադրում է շահագրգիռ անձանց իրավունքների restitutio in integrum իրականացնելու իրական հնարավորության ապահովումն այն բոլոր դեպքերում, երբ սահմանադրական դատարանի համապատասխան որոշմամբ վիճարկվող իրավանորմը ճանաչվում է Սահմանադրությանը հակասող եւ անվավեր: Դիմողն իր դիմումը հիմնավորում է այն հանգամանքով, որ ՀՀ սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630

որոշմամբ ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր է ճանաչել այն բոլոր իրավական նորմերը, որոնք մինչ այդ հիմք են հանդիսացել պետական կարիքների համար սեփականության օտարման համար:

- Դիմողը ՀՀ սահմանադրական դատարան է դիմել 15.09.2009թ: Վերջնական դատական ակտը՝ ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵՔԴ/0462/02/08 որոշումը կայացվել է 2009թ. մարտի 11-ին:
- Առկա է պետական տուրքի վճարման անդորրագիրը:
- Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից, գտնում ենք, որ դիմումի քննությունը ենթակա է մերժման հետեւյալ պատճառաբանությամբ.

«Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-630 որոշումից հետո՝ 27.11.2006 թվականին, ուժի մեջ է մտել 30.12.2006 թվականին: Վիճարկվող դրույթը սահմանում է. «Եթե մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը պետական կարիքների համար սեփականությունը վերցնելու մասին կառավարության որոշումն ընդունվելուց հետո տվյալ հողամասը վերցնելու կամ այդ հողամասի մասով հողհատկացում կատարելու մասին կայացվել է որոշում, եւ օտարվող սեփականատերն ընդունել է կառավարության սահմանած կարգով տրված գնային առաջարկը, կամ կնքվել է տվյալ սեփականության օտարման մասին պայմանագիր, ապա տվյալ սեփականության օտարման դիմաց փոխհատուցումը կատարվում է կառավարության սահմանած փոխհատուցման կարգով կամ կնքված սեփականության օտարման մասին պայմանագրին համապատասխան»:

ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-630 որոշումն ընդունվել է 2006թ. ապրիլի 18-ին: Նշված որոշմամբ անվավեր ճանաչելով օրենքի վիճարկվող դրույթներն ու իրավական ակտերը՝ ՀՀ սահմանադրական դատարանը նաեւ արձանագրել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ Ազգային ժողովը եւ ՀՀ կառավարությունը պարտավոր են հնարավոր սեղմ ժամկետներում քննության առարկա հիմնախնդրին առնչվող բազմաթիվ իրավական ակտեր ՀՀ Սահմանադրության եւ ՀՀ սահմանադրական դատարանի որոշման պահանջներին համապատասխանեցնել եւ օրենքով հստակ կանոնակարգել բացառիկ՝ գերակա հանրային շահերով պայմանավորված հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման իրավական ռեժիմը, սույն որոշման մեջ ՀՀ Սահմանադրությանը չհամապատասխանող ճանաչված իրավական նորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել օրենքի հիման վրա նման իրավական ռեժիմի ուժի մեջ մտնելու պահը, բայց ոչ ուշ, քան 2006թ. հոկտեմբերի 1-ը: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 10-րդ մասի

համաձայն՝ վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունվելու դեպքում այն իրավաբանական ուժը կորցնում է սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից, բացառությամբ վերը նշված հոդվածի 12-րդ եւ 13-րդ մասերով սահմանված դեպքերի: Այդ ակտերի վրա հիմնված սահմանադրական դատարանի որոշման ընդունմանը նախորդող ժամանակահատվածում ընդունված եւ կատարված վարչական կամ դատական ակտերը վերանայման ենթակա չեն: Հարկ է նշել նաեւ, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածում նշված գործերով օրենքի՝ դիմողի կողմից վիճարկվող դրույթը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունվելու դեպքում դիմողի նկատմամբ կիրառված վերջնական դատական ակտը օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման: Մինչդեռ, ընդհանուր իրավասության դատարաններում դիմողը հայց է հարուցել 2008թ., որով վիճարկվող իրավահարաբերությունները տեղի են ունեցել 2004 թվականի ընթացքում, այսինքն այն ժամանակահատվածում, երբ դեռ ուժի մեջ էին ՍԴՈ-630 որոշմամբ անվավեր ճանաչված ակտերն ու օրենքի դրույթները, հետեւաբար՝ իրավաչափ է եղել նաեւ դրանց կիրառումը՝ ընդհուպ մինչեւ ՍԴՈ-630 որոշմամբ նշված ժամկետը: Այսինքն՝ վիճարկվող դրույթն ընդամենը կանոնակարգել է այն իրավահարաբերությունները, որոնք ձեւավորվել են ՍԴՈ-630 որոշումն ընդունելուց հետո եւ վերաբերել է նախքան այդ որոշման մեջ նշված ժամկետը ստեղծված իրավիճակներին:

Ինչ վերաբերում է դիմողի առաջ քաշած " restitutio in integrum" հասկացության ենթադրյալ խախտման, ապա գտնում ենք, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 10-րդ մասի եւ 69-րդ հոդվածի 12-րդ մասի իմաստով այս հասկացությունը կարող է կիրառվել կոնկրետ գործով դիմողների նկատմամբ, հետեւաբար այն չի վերաբերում այն սուբյեկտներին, որոնք կոնկրետ գործով դիմողներ չեն հանդիսացել:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածով եւ 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ Ա. Խաչատրյանի դիմումի քննության ընդունումը մերժել ակնհայտ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ դատական կազմի որոշումն ընդունվել է ՀՀ սահմանադրական դատարանի անունից:

Նախագահող՝ Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

Անդամներ՝ Կ. ԲԱԼԱՅԱՆ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՍԴԴԿՈ-

1 հոկտեմբերի 2009 թ.